



ԶՐԱՅԻՆ ՈՒՆԻԿԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ Ստեղծական քաղաքի ջրամատակարարման, ջրահեռացման և աղբահանության բնագավառների տեխնիկատնտեսական գնահատում

Երկիր. Հայաստանի Հանրապետություն

Պատվիրատու ԱՄՆ ՄԶԳԴ/Դի.Էյ.Այ.

Ժամկետները ապրիլ – սեպտեմբեր, 2003թ.

Տեխնիկական առաջադրություն

1. Ջրամատակարարման, ջրահեռացման և աղբահանության համակարգերի ներկա վիճակի նկարագրություն
2. Համակարգերում առկա հիմնախնդիրների բացահայտում
3. Ծառայությունների վերաբերյալ բնակչության վերաբերմունքի բացահայտում
4. Համակարգերի բարելավման ծրագրերի առաջարկություն, աշխատանքային ծավալներ և ներդրումային գնահատում



Ծրագրի և կատարված ժամանակաշրջանի համառոտ նկարագրություն

- ✓ Կատարվել է նշված բնագավառների ինժեներական համակարգերի և շահագործման ու պահպանման ծառայությունների գործունեության ուսումնասիրում: Բացահայտվել և գնահատվել են նշված բնագավառների ներկա վիճակը և վեր են հանվել նրանց կարիքներն ու բերությունները:
- ✓ Ուսումնասիրությունների և ստացված արդյունքների վերլուծության հիման վրա ձևափորվել են այն հիմնախնդիրները, որոնց լուծումը խիստ անհրաժեշտ է նշված երեք համակարգերի զարգացման և բնականոն գործունեթյան համար:
- ✓ Ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքում առաջարկվել են այդ համակարգերի վերականգնման, վերակառուցման ու զարգացման առաջարկություններ, որոնցից տեխնիկատնտեսական հիմնավորումների արդյունքում ընտրվել են ամենաարդյունավետ տարրերակները:
- ✓ Կատարվել են ընտրված արդյունավետ և նպատակային տարրերակների մանրակրկիտ հաշվարկներ և որոշվել նրանց ինժեներատեխնիկական ցուցանիշները, աշխատանքային ծավալները և ներդրումային գնահատականները:
- ✓ Մշակվել են նաև նշված երեք բնագավառների համալիր զարգացման քայլերը, համապատասխան գործողություններով, ժամանակային և գումարային արժեքներով:
- ✓ Կատարվել է հասարակության իրազեկության բարձրացում և կարծիքի բացահայտում: Հարցման արդյունքում վեր է հանվել ջրամատակարարման, ջրահեռացման և աղբահանության համակարգերը սպասարկող ծառայությունների գործունեության վերաբերյալ բնակչության վերաբերմունքը:



Ծրագրի նպատակը

Մշակվել Ստեղծական քաղաքի ջրամատակարարման, ջրահեռացման և աղբահանության բնագավառների վերակառուցման, բարելավման և զարգացման հիմնավորված առաջարկներ: